ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԵՎ
ՀՀ ԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ

«16» 10 2024թ.

Հիմք ընդունելով Հայաստանի ազգային գրադարանի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության (այսուհետ՝ «Կողմեր») միջև երկկողմ հարաբերությունների զարգացումը, ինչպես նաև կրթության, գիտության և մշակույթի բնագավառներում տեղեկատվական-գրադարանային ոլորտի զարգացմանը միտված գործակցության կարևորությունը՝ Կողմերը փոխըմբռնման են եկել հետևյալի վերաբերյալ.

Հոդված 1

Կողմերը կզարգացնեն համագործակցությունը տեղեկատվական-գրադարանային, մշակույթի և գիտության ոլորտներում՝ ազգային օրենսդրության, միջազգային համաձայնագրերի, որոնց մասնակից են համարվում Կողմերը, ինչպես նաև սույն Հուշագրի դրույթների համաձայն:

Հոդված 2

Կողմերը պարտավորվում են միավորվել և միասին աշխատել երկկողմ կապերի ընդլայնման և հետագա զարգացման համար, աջակցել նախագծերին, որոնք կօժանդակեն նյութերի թվայնացմանը, և լրացնել տեղեկատվական-գրադարանային ֆոնդերում առկա բացերը:

Կողմերը պարտավորվում են համագործակցել գրադարանային-մատենագիտական գործընթացների ավտոմատացման, սահմանված կարգով էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակման, մատենագիտության, գրքերի վերականգնման և պահպանման, ինչպես նաև կադրերի պատրաստման ոլորտներում:

Հոդված 3

Հիմնվելով փոխադարձ հարգանքի և համագործակցության սկզբունքների վրա՝ երկկողմ հարաբերություններն ընդլայնելու և հետագայում զարգացնելու, կառույցների միջև մշակութային հաղորդակցությունը խթանելու նպատակով Կողմերը կհամագործակցեն հետևյալ հիմնական ոլորտներում՝

- ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում էլեկտրոնային գրադարանի ստեղծման գործում աջակցություն:
- Հաշմանդամություն ունեցող դատապարտյալների համար բրայլյան, ինչպես նաև ձայնագրքերի ժամանակավոր տրամադրում:
- Միջգրադարանային բաժնույթի ծառայության միջոցով գեղարվեստական և մասնագիտական գրքերի ժամանակավոր տրամադրում:
- Քրեակատարողական հիմնարկին գրքափոխանակման ֆոնդի միջոցով գրքերի անհատույց տրամադրում:
- Ազգային գրադարանի մասնագետների կողմից քրեակատարողական հիմնարկներում մշակութային, տեղեկատվական միջոցառումների կազմակերպում:
- Քրեակատարողական համակարգի աշխատակիցների հետ գրադարանի առանձնահատկությունների և վարման վերաբերյալ փորձի փոխանակման դասընթացների կազմակերպում:

Հոդված 4

Մասնագետների մասնակցությունը որակավորման բարձրացմանն ուղղված միջոցառումներին կիրականացվի հետևյալ կերպ.

- Կողմերն ինքնուրույն կընտրեն մասնագետներին՝ մյուս Կողմի կազմակերպած վերապատրաստմանը մասնակցելու համար,
- Կողմերը նախապես կհամաձայնեցնեն վերապատրաստման անցկացման ժամանակը և ծրագիրը:

Հոդված 5

- Կողմերը համաձայնության են գալիս առ այն, որ սույն Հուշագրի կնքումը չի հանգեցնում որևէ իրավական կամ ֆինանսական պարտավորության,
- Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է ծառայությունների կատարման ընթացքում առաջացած ծախսերը կատարել իր միջոցներով, բացառությամբ հետագա համապատասխան համաձայնությունների,
- Ոչ մի Կողմ հրապարակային հայտարարություն չի կատարի առանց մյուս Կողմի հետ նախնական համաձայնության, սույն Հուշագրով իրենց համագործակցության վերաբերյալ:

Հոդված 6

Սույն Փոխըմբռնման հուշագրի մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են միայն Կողմերի գրավոր փոխադարձ համաձայնությամբ: Փոփոխությունները ձևակերպվում են գրավոր և ուժի մեջ են մտնում Կողմերի ստորագրման պահից սկսած:

Հոդված 7

Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է 5 (հինգ) տարի ժամկետով, և եթե Կողմերից որևէ մեկը գործողության ժամկետի ավարտից առնվազն 3 (երեք) ամիս առաջ գրավոր չի ծանուցում մյուս Կողմին այն դադարեցնելու իր մտադրության մասին, այն երկարաձգվում է ևս 5 (հինգ) տարով:

Կազմված է _____ քաղաքում, «16» 10 2024թ.:

Սույն Հուշագիրը կազմված է 2 (երկու) հավասարազոր բնօրինակից հայերենով և ռուսերենով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆ՝	ՀՀ ԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝
_____	_____
ՉՈՒԼՅԱՆ Ա.Հ.	ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.Ս.